տի վերա ունինք արդեն ՈԺԲ(=1162) թվականով արձանագրություն. և մենք կտեսնենք, որ մոտավորապես այդ ժամանակներում էլ Նորոգված է միաբանական կյանքը Կեչառվաց վանքում՝ Սելջուկյան տիրապետության շրջանում խրթնանալուց հետոյ։ Բայց շենքի ծագումն ավելի հին է, կարծում ենք, Գրիգոր Մագիստրոսի շինել տված 1051 թվին. այդ մասին առիթ կունենանք հետոյ մանրամասն գրելու։ Խաչքարի պատվանդանի զույգ կիսասյուները տախտակաձև խոյակներով և կամարներով, բուն խաչի գլխի սրածայր կամարը և խաչի տակի պարանահյուս քանդակը նմանություն են բերում Կաթուղիկեի թմբուկի կիսասյուներին, արևմտյան ճակատի պարանահյուս խաչին և դրան սրածայր կամարին, որոնք բնորոշ են ԺԳ. դարու արվեստին։ Վեցիկի արձանագրության հնագրական կցվածքները՝ ար, որ, աւ տառերի՝ այդպիսի հաճախությամբ՝ այլ ևս վոչ մի կասկած չեն թողնում, թե Վեցիկը ԺԳ. դարու մարդ է, ուրեմն և Վասակաշեն կաթուղիկեն է այն նոր յեկեղեցին, որ յիշված է խաչքարի արձանագրության մեջ։

Յեկեղեցու մեծությունն է 13մ. 40սմ.×9մ. 80սմ. հարավային և արևմտյան պատերով, իսկ հյուսիսային և արևելյան պատերով 13մ. 5սմ.×9մ. 7սմ. արտաքուստ. ավելի մանրամասնություններով հարավային պատը՝ արևմուտքից դեպի արևելք մինչև նիշի բացվածքը 3մ. 78սմ., նիշը 89սմ., մինչև մյուս նիշը 3մ.53սմ., յերկրորդ նիշը 88սմ., մինչև արևելյան անկյունը 3մ. 82սմ.։ Արեւմտյան պատը՝ հյուսիսից հարավ՝ մինչև դրան բացվածքը 4. մ. 3սմ., դրան բացվածքը 1մ.2սմ., դռնից մինչև հարավային անկյունը 4մ. 3սմ.։ Հյուսիսային պատը արևելքից արևմուտք մինչև դուռը 6մ. 6սմ., դրան բացվածքը 1մ. 12սմ., և դռնից մինչև արևմտյան անկյունը 5մ. 88սմ., արեւելյան պատը հարավից դեպի հյուսիս մինչև նիշը 3մ. 76սմ., նիշի բացվածքը 82սմ, և մինչև հյուսիսային անկյունը 2մ. 12սմ։

Ներսից խաչաձև է հատակագիծը, հյուսիսից հարավ ձգված թևը ավելի կարճ։ Ինչպես ԺԲ.—ԺԳ. դարու տաճարներից շատերը (Յոհաննա վանք, Գեղարդ ևն) չորս անկյուններում ունի կրկնահարկ ավանդատներ՝ արևմտյան հարկն ունի պատում հաստատված աստիճաններ։ Յեկեղեցու յերկարությունն է ափսիդով 11մ. 35սմ., լայնությունը 7մ. 95սմ.։—Ափսիդի խորությունը 3մ. 66սմ., բուն բացվածքը 4մ. 48սմ., իսկ արտաքին բացվածքը յեզերող կիսասյունից կիսասյուն 5մ. 10սմ.։ Հյուսիսային պատը արևելյան ճակատից դեպի արևմուտք, յերկու կիսասյուների մեջ յեղած տարածությունը 4մ. 10սմ., ապա մինչև արևմտյան կիսասյունը 2մ. 65սմ.։ Արևմտյան թևի հյուսիսային և հարավային պատի մեջ յեղած տարածությունն է 5 մետր։ Պատի հաստությունը 98սմ., իսկ աւանդատների դռների լայնքը 92սմ։։

Յուրաքանչյուր պատի վերա կա մի մի նեղ և յերկարավուն լուսամուտ և չորս ավանդատների պատերի վերա մի մի փոքրիկ լուսամուտ, ինչպես ցույց է տալիս պատկերը հարավային և արևմտյան պատերով (պատկ. 23)։ Հատակագիծ պատրաստել անկարելի եր, հատակագծերը ծածկված լինելով, յեկեղեցու ներսը լցրած փլատակի քարերով։

Վասակ Խաղբակյանը չբավականացավ յուր Կաթուղիկեի շինությամբ. հարավային պատի մեծ արձանագրության համեմատ (պատկ. 4. Հավել. 4) նա յուր յեկեղեցին զարդարեց պեսպես սպասներով, խաչերով, նվիրեց գանձագին մի գյուղ, անունն անհայտ, արձանագրության այդ մասը կոտրված լինելու պատճառով, մի այգի Յերևանում և մի ուրիշը Նորաշենք գյուղում։ Նորա որինակին հետևեց և ամուսինը Մաման՝ նվիրելով մի այգի Յերևանում. արձանագրության այս մասն ել թափված է, և մենք ուրիշ աղբյուր չունինք վորոշելու, թե ո՞ւմ դուստրն եր Մաման. սորա հիշատակին, վորդին Հասան-Պռոշ նվերներ ունի տված Կոշիկ անապատին 1244 թ., Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորին և Կարբու Յոհաննայ վանքին 1247 թ.։ Որբելյանը նույնպես հիշում է, թե ինչպես Սյունյաց Ստեփանոս յեպիսկոպոսի՝ Ածոպի Պետրոս յեպիսկոպոսի մոտ գրավ դրած «զՏէր Յովհաննիսի զաւագ խաչն եւ զթիթեղնակապն եւ զկամարակապն», վորոնցից «թիթեղնակապն ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն եւ կամարակապն կամար ակնաձև թեէ ի թեւ», յուրացնում է Վասակ, «թիթեղնակապն ու կամարակապը դնելով «յիւրում վանս ի Կեչառուս ուխտի», իսկ ավագ նշանը նվիրում աթաբեկ Իվանեին։ Սյունյաց Սարգիս յեպիսկոպոսն ու Լիպարիտ Որբելյան 1000 կարմիր դահեկան տալով Իվանեին, հաղիվ կարողացան յետ ստանալ միայն վերջինը *։ Արձանագրության մեջ հիշված Տ. Գրիգորիսի և Գրիգոր վարդապետի մասին կտեսնենք հետո, յերբ առիթ կունենանք վանքի մասին՝ իբրև հոգևոր կեդրոնի՝ խոսելու։

Վասակի և Մամայի վորդիքն եյին ըստ արձանագրության «Պապաք, Մկրէմ և Հասան՝ երկանուն Պռոշ», վորոնց մասին տեղեկություններ են տալիս Կիրակոս, Այրիվանեցին, միայն Պապաքի մասին նաև Վարդան։ Դոցանից Պապաքը 1222 թվին ընկավ Խրիչաղների դեմ մղած պատերազմի մեջ. Գանձակեցին պատմելով այս դեպքը, ավելացնում է. «զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն, Մկրէմ, Հասան, զոր Պռոշն կոչէին, արք քաջք և անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց» **։ Վարդան ևս հատուկ շեշտում է Պապաքի քաջությունը. Գրիգոր Խաղբակյանի հետ Խրիչաղները բռնեցին «և զեղբօրորդին իւր զարիական և զքաջ նահատակն Պապաքն անուանեալ» [1]։ Իսկ Այրիվանեցու խոսքերը հոր և վորդիների մասին տեսանք առաջ։ Տարաբաղդաբար սրանց կատարած քաջագործությունների մանրամասնությունները

* Օրբ. 352—354։
** Գանձ. Թիֆլիս. 1910. 194։
1 Հրատ. Էմինի. Մոսկվա. 1861. 187.։